

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Համարի մի փաստ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մատենագրութիւն. Նամակ Թէօդօսիայեց. Նա-
մակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմ. Նամակ Ծրան-
այեց. Նամակ Թիֆլիսի. Արտաքին լուրեր.—
ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Քաղաքակրթութեան
կենսոճանդները.

ՀԱՄԱՁԻՉ ՄԻ ՓԱՍՏ

Այն արեւնահեղ ընդհարումի մէջ, որ
Ներկայումս տեղի ունի Անտիքեան ծովում,
Հիւսիսային Ամերիկայի մէջ հանրապե-
տութիւնը ցոյց տուեց որ շատ խրատա-
կան յատկութիւն: Յայտնի է, որ Միա-
յեալ-Նահանգները զինուորական պետու-
թիւն չեն. խաղաղ ժամանակ նրանց կա-
նոնաւոր զօրքի թիւը շատ աննշան, հա-
մարդ չեն բան է համեմատած երկրի
աշխարհ տարածութեան և միւս քաղա-
քակրթ պետութիւնների հետ: Ամերիկայի
երբէք չէ վարակել եւրօպական միլիտա-
րիզմը. և այն հրէշաւոր գումարները, որ
խրաբանչիւր տարի զօրքը կրանում է Նե-
րօպայում, Ամերիկայի համար մի ակամայ,
պարտաւորական չարի է, որ ժամանա-
կակից զինուորական մարդկութիւնը տալիս
է պատերազմի աստուածութեան: Ամերի-
կան շատ քիչ ծախսեր անելով իր մշտա-
կան զօրքի վրա, պետական եւեմուտքի
ամենամեծ մասը տարիների ընթացքում
ծախսում էր ժողովրդի պէտքերի համար:
Տնտեսական և մտաւոր այն վիթխարի ա-
ռաջագիմութիւնը, որին այժմ հասել են
եւրոպացիները, անշուշտ այնքան արագակալ,
այնքան հուժկու հոսանքով չէր գնայ,
եթէ Վաշինգտոնի Հիմնած հանրապետու-
թիւնը հարկ համարէր պարծենալ իր
բանակների ահագին թիւով, եթէ տարեց-
տարի նոր զենքերի, նոր մարտանաւերի
համար դատարկէր պետական գանձարանը:
Ոչ մի պետութիւն այնքան շատ փող չէ
ծախսում ժողովրդական լուսաւորութեան
համար, ինչպէս Ամերիկան: Եւրօպան զին-
ւորներ էր կրթում, Ամերիկան—ազատ
քաղաքացիներ: Եւրօպան կարող էր յաղ-

թել կուրի դաշտում, իսկ Ամերիկան, ըստ
երեւոյթին, չէր պիտի յաղթէր, քանի որ
պատերազմական կուլտ չէ պաշտում:

Բայց ի՞նչ դուրս եկաւ: Հրատարակվեց
ամերիկո-սպանական պատերազմը, և ա-
մենք համար հարց էր. մի՞թէ անխել-
քութիւն չէ եւանկիների կողմից պատերազ-
մի դաշտ նետով կամաւոր զօրքերով, չու-
նենալով մշտական, մարդկած զօրքի մի
ստուար բազմութիւն, որ գոնէ հաւասար
լինէր թշնամու բազմութեան: Սակայն
Ամերիկան այժմ էլ, ինչպէս և 1863—1866
թվականների պատերազմի ժամանակ պարզ
ցոյց տուեց, որ փտահելի, քաջ և անձ-
նուէր զինուորը կրթված, հասկացող և
ազատ քաղաքացին է: Պատերազմի ժամա-
նակ կարծես կախարդական դաւադանի
շարժմամբ առաջ եկան Վեյլենների, Սամի-
սոնների, Շէյնների նման ընդունակ ծովա-
պետներ, Հօքսոնների նման հերոսներ, իսկ
ցամաքային զօրքը ցոյց տուեց այնպիսի
գիմարեղանակութիւն, անձնագործութիւն և
հայրենասիրութիւն, որոնք պատիւ կը բե-
րեն տարիների ընթացքում մարդկած, աշ-
խարհակալական աւանդութիւններով անվաճ
և պատերազմական ահագին պրակտիկա
ունեցած բանակներին: Այն, ինչ եւրօպա-
ցին ձեռք է բերում զօրանոցում, դաւնա-
լով մի ծանր բեռ իր երկրի համար, ա-
մերիկացին իւրացնում է իր առօրեայ
կեանքի մէջ, չէ հեռանալով իր գործից,
իր աշխատութիւնից, չէ ծանրանալով ու-
րիշների վրա, չէ դաւնալով խոշորոտ
ազգային առաջագիմութեան:

Մի՞թէ այս դասը, որ տալիս են եւան-
կիները, բաւական մեծ է, որ եւրօպացի-
ները նայեն և օրինակ վերցնեն: Ծօշակից
փաստերով ցոյց են տալիս, որ աւելորդ,
վնասակար է միլիտարիզմի սխտեմը, որ մի
ազգ ուժեղ է ոչ թէ իր սուկների ահա-
գին քանակութեամբ, այլ իր կրթու-
թեամբ, իր մտաւոր զարգացմամբ և տըն-
տեսական բարօրութեամբ: Մի՞թէ դար-
ձեալ չեն համարվի, մի՞թէ նոր աշխարհը
չի սթափեցնի հին քաղաքակրթութեամբ
պարծեցող եւրօպացիներին:

առջև բացվում, հանդիսանում է այնտեղ վստող
կեանքը իր ամբողջ մեղմութեամբ:

Ներկայ է. դուրս դուրս էր գալիս բազմամարդ
փողոցները և հրապարակները: Տեսնում էր ահա
չիկով հազմված, դուրս գալիս երեսը պուդ-
րած, շրթունքները կարմիր ներկած, ձեռքերը
քաղաղ շարժելով պտուտակ են, սրան-սրան դի-
մում, ժպտում, փաղաքում: Հասարակաց կա-
նաչք են, անշուշտ: Հասարակաց կանայք, որ-
չափ խորթ, տմարդի և ստոր կոչում. սակայն
մարդկային լեզուն ընտելանում է և այդ ան-
նորդաշնակ միացած բառերին, և նա նորմալ
հեղուկութեամբ արտասանում է այն, որպէս նա
ասէր: Հասարակաց այգի: Ներկայեան մութն
ընկնում է թէ չէ, նրանք դուրս են թափվում,
չտապում իրանց տրտման: Յուրտ, ձիւն, անձրե-
ք իր կայ այդ կիւն կոչված արարածների համար:
Հովանոցը բաց կանգնած է նա անձրեկի տակ:
Գունատ, մրսում, դողում է խեղճը, բայց ժա-
մերով չէ հեռանում փողոցներից: Ի՞նչ է նրան
նետել, ի՞նչ այդ ընթացքի մէջ. մի այլ արհեստ,
մի այլ գործ չէր գտնւ. այդ թշուառականը: Ահ,
նա չէ յայտնի, որ նրանց մեծ մասը, եթէ չա-
սենք առանց բացառութեան, նրանց ամբողջ
կոնտինգենտը՝ ծարր, յոյսը կտրած՝ ստիպված են
եղել այդ ճանապարհ ընտրել: Ի՞նչ ծաղր, ի՞նչ
արհամարհանք և ստորութիւններ, ի՞նչ ներքին
կոտորած չեն նրանք կրում: Նա կեանքը աւելի
լաւ է, չունի, գոնէ նա տէր, տիրական ունի:
Գոնէ նրան պահում, սիրում են անգամ... Իսկ
այդ կանայք. արհամարհված, դուրս են վերցն-
ված բոլոր շրջաններից: Գոյութեան խնդիրը

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

«Մ ա ռ ի մ (Homo Sum)».—Վէպ Գ. Էքէրսի.
Թարգմանեց Սա. Մալխասեան. Հրատ. Հրատարակչա-
կան ընկերութեան, Թիֆլիս, 1898, Երես 435, գինը 1
ռուբլի:

Խրաբանչիւր լաւ գիրք, որ լոյս է տեսնում
մեր գրականութեան պէս մի աղքատ գրակա-
նութիւն հարստացնելու համար, պէտք է համա-
րել մի ամբողջ երևոյթ, գրական մի գէշ:
Արքիմ ժամանակ մեր մէջ երկու այգի-
սի գրական դէպքեր տեղի ունեցան. առա-
ջինը՝ Սեմկիլիչի «Յո երթա» պատմական
վէպն է, երկրորդը՝ Գ. Էքէրսի նոյնպէս պատ-
մական «Մարդ եմ» վէպը: Էքէրսի վէպը հըռ-
չակված է իր պատմական վէպերով. դրանց մէջ
իր գեղարուեստական արժանաւորութիւններով,
իր գաղափարով առաջին տեղն է բռնած
«Մարդ եմ» վէպը: Ընթերցողը փոխադրվում է
չորրորդ դարը, Սինայի անապատները, ուր աշ-
խարհից հրաժարված անապատականները տան-
ջում էին իրանց՝ երկրի ճանապարհը Տեշու-
թեամբ գտնելու համար: Պատմական այն շըր-
ջանը, որից Էքէրսի վէպը իր վէպը, շատ
հետաքրքրական է: Քրիստոնէութիւնը նոր էր
նուաճումներ անում, նոր էր կաղմակերպում իր
ծիսական եկեղեցին: Նկատարում ունեցեց ճգնա-
ւորների դարը. մարդիկ թողնում էին «աշխար-
հը», հեռանում էին անմարդաբնակ, անապատ
տեղեր, ընտելութիւն էին հաստատում այրերի
մէջ և կատարեալ արհամարհանքով վերաբերվե-
լով իրանց հողաչին մարմին, տանջում էին
նրան, գրկում էին ամեն մի յարմարութիւնից,
ծնծում էին, կեղեքում, հաւատացած լինելով,
որ այդ ճանապարհով միայն կարող է պայծա-
ռանալ հոգին և գնալ արքայութիւն: Արեւմտեան
այդ ֆանատիկոսութիւնը, որ մարդուն հասց-
նում էր անասնական դրութեան, վարակեց ամ-
բողջ Արեւելը: Նրանք եկան ճգնաւորական
կարգեր, որոնք աշխատում էին գերադնեցել
միմեանց գոյակի, խիտ կենցաղավարութեամբ:
Այսպէս, Միջագետքում առաջ եկաւ «սոտաճա-
րակներ» կարգը. այդ ճգնաւորները երկրի
սիրտը համար արածում էին անասնանների հետ:
Յայտնի է Սիմոն անունով ճգնաւորը, որ ե-
րեսուն տարի անցկացրեց մի բարձր սիւնի
գլխին շինած փղերի տախտակամածի վրա
ամառ ու ձմեռ, անձրեկ և արևի տակ. իսկ

մի կին ճգնաւոր սուրբի հոգակ ստացաւ այն
պատճառով, որ մի քանի տասնեակ տարի-
ների ընթացքում չէր լուացել իր դէմքն ու
մարմինը, չէր սանրել իր մազերը: Ճգնաւորու-
թիւնը վանականութեան նախահայրն էր. ինքն
իրան կեղեքող անապատականին յաջորդեց վար-
դապետը, որ հիմնեց կրօնական կարգեր և վան-
քերի խիտ ցանցով պատեց քրիստոնէայ աշխար-
հը, ձեռք առաւ ահագին իշխանութիւն, սկսեց
դատել, ղեկավարել: Էքէրս իր վէպի մէջ անց է
կացրել այն միտքը, որ անապատականութիւնը,
որքան և խիտ ու անողորմ լինէր դէպի մարդ-
կային ընտելութիւնը, չէր կարող միանգամայն կըտ-
րել մարդուն աշխարհից, մեռցնել մարդկային
զգացմունքները: Ճգնաւորը, ատելով աշխարհը,
զգլկելով նրա կեանքից, շարունակում էր մարդ
մնալ: Այդ հիմնական գաղափարի արտայայտու-
թիւնը շատ գեղեցիկ կերպով է արդիւն գերմա-
նացի վիպագրողին. վէպի մէջ կան ցափառակող
էջեր, որոնք ցոյց են տալիս թէ ինչպէս մարդ-
կային ընտելութիւնը մրցում է ֆանատիկոսութեան
սասմանած անրեական, կատաղի ճնշումների
դէմ և ինչպէս նա, վերջի վերջոյ, յաղթող է
հանդիսանում: Այդ մրցութիւնը, այդ յաղթանա-
կը պատկերացած են որոշ զժպտված, ամբողջ
ջաղրած տիպերի մէջ. վէպի մէջ չէր կայ մի
անձնաւորութիւն, որ ունենայ թող, անորոշ,
մշտապատ դէմք. աղքատ հովուհի Միրիամ,
հեթանոս կին Սիրօնա, քրիստոնէական ուղղա-
փառութեան նախահայրն Վերջինս—որոնք
կանացի տիպեր են: Տեսե՛ք ինչ հրաշալի սէր է
գրել հեղինակը Միրիամի և Սիրօնայի մէջ:
Մարդկային սրտի այդ ամենավեճ զգացմունքը
հաստատապէս սքանչելի է թէ վարկեր Միրի-
ամի, թէ գեղեցիկ Սիրօնայի, թէ քրիստոնէայ
երկրասարդ Պօլիկարի մէջ: Վերջինս քանդա-
կազոր է. գեղարուեստագէտի սէրը հեղինակը
նկարագրել է շատ սիրուն. բաւական է կարդալ
XIII գլուխը, ուր նկարագրված է նրա և ժօր
մէջ տեղի ունեցած տեսարանը, ինչպէս նաև XV
գլուխը, ուր Պօլիկարը որոնում է իր սիրու-
նուն ճգնաւորական պատու,—և դուք չէք մոռա-
նայ այդ պատկերները: Հրաշագործ սէրը, որ
այդպիսի արտայայտութիւններ է գտնում դանա-
զան տեսակ մարդկանց մէջ, միթէ կարող էր
բոլորովին խորթ մնալ աշխարհից քաջված ճգնա-
ւորին: Ի Տարեկ է ոչ: Վէպի գլխաւոր հերոսներից
մէկը, ճգնաւոր Պաւլոս, մեռնելու ժամանակ
գրել էր ամուսնով իր քաղաքի պատին. «Այդ»

«Բուք գիտե՛ք, դուրս է այդ թափառական-
ներից մէկը, կան մարդիկ, որոնք ձգտում են
իրանց ամբողջ ցանկութեամբ գործել արժանա-
վայել կեանք ունենալ, սակայն և այնպէս հա-
սարակական ներկայ կացութեան մէջ մնում են
պարագ, անգործ... Ընդունեցէ՛ք մեր գանգա-
տները, լսեցէ՛ք մեր ձիւղերը, ցաւի, կսկիծի և ատե-
լութեան ձիւղեր. խորհեցէ՛ք, որ երկրի վրա
գտնվում են էակներ, որոնք մինչև անգամ աշ-
խատանք ճարելու էլ բախտ չունեն, որոնք պա-
րիաների մի ահագին լեզու են կազմում:

Չէ որ դրանք ևս գոյութեան, ապրելու իրա-
ւունք ունեն:

Անցէ՛ք, մի փոքրիկ այցելութիւն արեցէ՛ք
Լօնդօնի բանուորական թաղերից մէկին: Ցիւի,
կեղտ, մութ ներքնայարկ. մի սենեակ միայն,
ուր թափված են կին, երեխայ, տղամարդ, աղ-
ջիկ,—գրեթէ մեկը. այդ «սենեակը» համ խո-
հանոց է, համ ճաշարան, համ ննջարան... ամեն
ինչ: Փաղութիւն ունեցէ՛ք շարունակել ընդ ևս
դէպի առաջ քայլել: Մարդ ապրում է, մազերը
ցցվում, ակամայ ցետ ու ցետ նահանջում՝ սար-
սափած իր տեսած—լսածներից: Բնութեան լոյ-
սը, բնութեան օդն անգամ պակասում է այդ
օր և գիշեր գործող, օր և գիշեր էլ դատարկ
գրպանով և ստամոքսով բազմաչափ թշուառ-
ներին:

Այժմ անցէ՛ք Լօնդօնի այլ թաղերը՝ արխոսե-
րատների, հարուստների և ուժեղների մարտ-
նայեցէ՛ք էլեքտրականութեամբ լուսաւորված հո-
յակապ, փառահեղ շինութիւններին, այն դարդ
ու դարդարանքներին, այն փարթամ գեղու-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՑ

(Թղթակցութիւն)

Լօնդօն, յուլիսի 7-ին

Պարիզ և Լօնդօն, որչափ քաղաք են հնում,
ինչ բարձր իդէաներ չենք մենք միացնում այդ
անունների հետ... Ուսում, թատրոն, ամուսն,
քաղաքակրթութեան, գիտութեան կենտրոն, լու-
սաւորութեան, ազատութեան ասիոյեան և ա-
ռաջիւրդի: Եւ ինչպիսի սրտի արտիկումով, մի
տեսակ երկիւղածութեամբ ենք առաջին անգամ
մենք ուր դնում այդ նուիրական վայրերը:
Դուք մտնում էք, պտուտակ, դիտում, սովորում:
Լայնատարած գեղեցիկ բուլվարներ, հոյակապ
շինութիւններ աշ ու ձախ, թատրոններ բազ-
մաթիւ, համալսարան, դպրանոց, թանգարան,
ակադեմիա, պարլամենտ... որ մէկը թւենք:
Դուք հրճվում էք, հիանում, ակնածութեամբ
գլուխ խոնարհում մարդու գործ դրած ջանքե-
րի, մարդկային մտքի, արուեստի և գիտութեան
այդ կենդանի արձանների, այդ սուրբ տաճար-
ների առաջ:

Բայց ձեր հիացումը անկարող է լինում եր-
կար, անեղծ, անվթար մնալ: Դուք նկատում
էք, որ ձեզ չըջապատող միջոցաւոր ծածկվում
է սև սև ամպերով. ձեք հրճւանքը անցնում,
տեղի է տալիս այլ գեղամուճներին, երբ ձեր

Խուռ և եղել և հուղտորակահանութիւնք, որ կոչ-
ված է հուլեկու առանց խտրութիւն զնեկու հո-
տի մեծերի և փոքրների մէջ: Բայց երբ և է-
զտնվել է նա արդեօք իր կոչման բարձրու-
թեան վրա.— թերթեցեք պատմութիւնք՝ ժամա-
նակակից և անցեալ: Աղբառութիւնք նա երա-
նութիւն է համարել և քարոզել, ո՞հ, ո՞չ բողոք-
այլ միմիայն փորձերին, միմիայն մշտնաշա-
հնչեցականքին: Յոժար համբերութեամբ քաշի-
լո այդ քաղցր լուծը, յորդորել է նա թշուառ-

ԳԵՐԲԵՆԴԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքա-
յին ինքնավարութիւնը ահա մի ամիս կը լինի,
որ իր նիստերը նուրբէն է մի շատ հետաքրքիր
հարցի ընթացիկներ: Ներկա ամիս առաջ գիտա-
պետ Ուսացով իր տունը, որը գտնուում է քա-
ղաքի ամենալայն փողոցներից մէկի վրա, վար-
ձով է տուել հասարակաց տուն ընտանիքի
համար: Թոյլտուութիւնը ստացվել է նախ ոստի-
կանապետից և յետոյ նախկին քաղաքապետից,
որը, առանց ձայնաւորների համաձայնութեան,
իրաւունք է տուել ընտանիքի յետոյ, որը
պէտք է նկատել շատ մօտ է պաշտօնական մի-
ջանի հիմնարկութիւններին: Այդ օրից բազմա-
թիւ խնդիրներ ու զանգամանակներ են տեղում ուղ-
բական զանազան ինտելիգենտ անձինքների կող-
մից, որոնք դժբաղդութիւն ունեն հարեան լի-
նելու մի պարտի, որը իր տունը վարձով տա-
լու յարմար բան չէ գտել, բայց հասարակաց
տնից: Այդ խնդիրների ընթացիկներ ինքնավա-
րութեան նիստերում բաւական վէճ է բարձ-
րացրել ձայնաւորների մէջ: Սպասում են նա-
հանգապետի վճիռն, որին ուղարկւում յայտնել
է հասարակութեան արդարացի բողոքը: Զարմա-
նում մեր մեր ինքնավարութեան վրա ինչ վի-
ճելու կամ վճիռների սպասելու պատճառ կայ,
քանի որ ինքը ինքնավարութիւնը, օրէնքի հի-
ման վրա, լիազօրութիւն ունի փակելու ան-
պատեւելի հիմնարկութիւնը:»

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մեր թեմական
դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրեց տեաչի
պապին համար պ. Տ. Յովհաննէսեանցին,
բայց նա հրաժարվեց: Հրաժարվել է և պ. Ա.
Բիստրով Յովհաննէսեանը:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Փրանսիական մի լրագրի թղթակից նկարա-
դրում է այն դարձանակի անտարբերութիւնը, որ
տիրում է Մարդկութեան սպանական զորքերի
պարտութիւններից յետոյ: Փառքները լին են
հանդիսատեսներով, զբոսաւայրերը ծածկված են
ձիւղերով և փայլուն կառքերով: «Նրեքը,
ասում է թղթակիցը, երեկոյան զուգարձութիւն-
ների համար հիմնած այգիները աւելի լաւ մուտք
չեն ստացել: Յուլիանոսը փոքրօր է առաջաց-
նում: Թղթակցի կարծիքով, այդ անտարբերու-
թեան պատճառն այն է, որ սպանական ժողո-
վուրդը ոչինչ է համարում իր կոյնիկները, ո-
րոնք միայն ծախս և գլխացաւանք են պատճա-
ռում, միւս պատճառն այն է, որ սպանական
զորքը ազգային չէ համարվում, այլ կառավարա-
կան: Հաւասար կերպով սպանացիին անվրդով
է և այն հարցի մէջ թէ մի կը լինի կառավա-
րութեան գլուխ և դահի տէր. անձինքները փոխ-
վում են, բայց կառավարութեան սխտեմը նոյնն
է մնում:»

Իսկ պաշտօնական Սպանիան, որի համար մի
և նոյն չէ թէ ով կը լինի կառավարութեան
գլուխը, յուզվում է: Սպաստում թէ մի քանի
ժամանակ առաջ դրականապէս յայտարարել էր
թէ խօսք չէ կարող լինել հաշտութեան մասին,

ներին խոտանալով նրանց փառք և արքայու-
թիւն հանդերձեալ կեանքում, բաղաւորներին
վերապահելով և երկրորդ անգամ արքայութիւնը:

Ինչ են արել և ինչ են անում մանաւանդ
այժմ այս լուսաւորված երկրներին կառավա-
րութիւնները: Նրանց ղեկավարին վաղուց է
յայտնի՝ laissez faire, laissez passer. կառա-
վարութիւնը չը պիտի միջամտէ, հետեւաբար նա
պարտաւոր չէ որ և է փոփոխութիւն մտցնել
պրոլետարիատի դրութեան մէջ, որը բնօրինե-
րի ոչ մի կարիք էլ չունի...

«Բարձրագոյն յանգանք արժանի է պատժի»,
աղաղակում է Փրանսիական բուրժուա մամուլը,
եւ յանցաւորը մի խեղճ մայր է, որը իր սովա-
ման լինող ընտանիքը փրկելու համար ստիպված
է լինում մի հայ գողանալ: Բայց երբ նոյն երկ-
րում նոյն մամուլն և կառավարութեան ներկայա-
ցուցիչները բարեհաճ աչքի առջև զանազան տու-
ղեր և պատգամաւորներ հասարակական զանձա-
րանից օր ցերեկով յանդիմանում են 1,400,000,000
(Պանամա),—կապիտալիստական երկրից մի
զաւարեական լուով ինչ է ինչում մշտական
մամուլի շրթներն: Ո՞ր մնաց ձեր «Լուր-
բանի» լրագրի յանցանքը արժանի է պատժի: Ներկա
կշիռ, երկու չափ,—ահա ներկայ բուրժուազա-
կան բեկման աշտաբանը: «Մամուլաւորա-
րան,—ասում էր Փրանսիական պարլամենտի
ամբիոնից բանաւորական պատգամաւոր Վիվեա-
նի,—երկու երես ունի. մէկը՝ նաղելի, ճարտա-
մաս, դարձրած դէպի բախտաւորները, միւսը՝
սառը, անդգայ, անդուլ՝ դարձրած դէպի թըշ-
ւառները:»

այժմ բանակցութիւններ է սկսել պատերազմին
վերջ դնելու համար: Աւելի դժուար է թաղուհու
դրութիւնը: Վերջին դէպքերը նրան շատ ցնցե-
ցին և եթէ նա աշխատում է զսպել իր յուզ-
մունքները, պատճառն այն է, որ չէ ուզում
տիրացնել իր որդուն, մանուկ թաղաւորին, որը
արդէն սկսել է հասկանալ թէ ինչ է մօր վշտի
պատճառը: Նորեւեմբ, ինչպէս պատմում են,
թաղաւորն առաջ. «Մայրիկը էլի յուզված է. ե-
րեկ, պատերազմի մասին վատ տեղեկութիւններ
են ստացվել: Այդ օրից մայրը աշխատում է
զուարթ երևալ: Երբ պաշտում ստացվեց Սեր-
վերանի նաւատորմի ջնջման լուրը, ընդհանուր
յուսահատութիւն տրեց: Փաղուհին շանթաւար
էր դարձել այդ դժբախտութիւնից, բայց միւս
օրը նա սկսեց սիրտ տալ իր խորհրդակցներին:

Ֆիլիպինեան կղզիներում հանդարտութիւն է
տիրում: Մովսէս Պէլլէ ոչինչ գործ չէ սկսում.
արդեօք դրա պատճառը զիպոնաւորական է,
թէ ծովապետը սպասում է ցամաքային զորքերի
հրամանատարի դաշտեան—յայտնի չէ: Ազգայնա-
րէութիւնը հրատարակեց, որի մէջ Ֆիլիպինեան
կղզիները հանրապետութիւն հռչակեց, իսկ ի-
րան—այդ հանրապետութեան նախագահ: Այս
ժողովուրդը—ասված է այդ յայտարարութեան
մէջ, անվարձութիւնների և վտանգի ժամանակ
տուեց համբերութեան և քաջութեան ապացոյց-
ներ, իսկ խաղաղ ժամանակ ջանասիրութեան և ե-
ռանդի ապացոյցներ: Այսպիսի ժողովուրդը կոչված
է կատարելու մի մեծ բան. նա պիտի դառնայ
նախախնամութեան ամենաուժեղ գործընկերը
մէկը և պիտի վերադառնա մարդկանց ճակա-
տագրքը: Այսպիսի ժողովուրդը իր մէջ ոչինչ
և եռանդի բաւական արդիւնքի ունի, որպէս զի
պատմութիւնը և ջնջումը, որին են-
թարկել է սպանական կառավարութիւնը և
բռնէ իր համբատ, բայց պատուաւոր տեղը ազատ
ազգերի կոնցերտի մէջ:»

ՆԱՄԱԿ ՖԻԼՆՈՒՑԻՑ

Պարիզ, յունիսի 27-ին

Ներկէ կայացաւ «Théâtre Mondain»-ի մէջ
այն ցերեկայինը, ուր երկուստարդ գերասան Կա-
րապետ Գալֆայանի, երրորդ անգամ լինելով, ի
հանդէս պիտի դարձէր—Համլէտի դժուար դերին
մէջ, զոր պիտի կատարէր հայերէն լեզուով,—հայ
և Փրանսիական հասարակութեան առջև: Առա-
ջին երկու ներկայացումները, որոնց համար Պա-
րիզեան քանի մը օրաթերթեր գովեստով խօ-
սեցան, մինչ լուովեան միայն պիտի անցնէր,
որովհետեւ ամենամը ներկայ գտնվելու պատեհու-
թիւնը չը կրցանէր ունենալ:

Այս անգամ, դերասանը բեմ բարձրանալէ ա-
ռաջ, Փրանսիացի գրաւորն պ. Ժան-Բէրնար
աշխոյթ ատենաբանութիւնով մը բացատրեց
հանդիսատեսներուն թէ ինչ անցեալ ունեցած
է հայ թատրոնը և թէ ինչ ներկայ ունի այժմ:
—Որչափ մեծ ակնորով լսեցինք զինքը, Փրան-
սացի գրաւորն, որ ոչ միայն հետաքրքրված էր
հայութիւնով, անոր գրականութիւնով ու գե-
ղարուեստով, այլ և բաւական հմուտ ուսումնա-

Բայց որչափ էլ մոլթ, խաւար լինի այսօր
հասարակական հօրիզոնը, որչափ էլ նա սկս
ամպերով օր օրի վրա գոյլի, ծածկի, դարձեալ
այտնում է այնուհետ թիպերի ճեղքերից ցո-
լում են պայծառ արեւի մի քանի ճաճանչներ՝
ապագայի յոյսեր: Ժամանակակից սերունդը ներ-
կայ է Արեւմուտքում մինչև այժմ չը տեսնված
չարժման: Վաղուց են անցել այն երջանիկ ժա-
մանակները, երբ թշուառութիւնը երանութեան
կարգն էր դասվում: անցել գնացել է այն ժա-
մանակը, երբ, ըստ Ժորժիսի արտայայ-
տութեան, la vieille chanson berçait la misère
humaine. Այսօր հարստահարված պրոլետարիատը
այլ երգեր է լսում՝ իր ցաւերին դարձան խոտ-
ացող, իր վերքերին փրկարար սպեղանի դնող
երգեր... Մի քանի տասնեակ տարիներից ի վեր
Արեւմտեան Նւթագայի բանուր դասակարգը սկսել
է լրջօրէն կազմակերպվել, հիմնել, վերականգնել
իր նախկին կոթորցացիւնները և սխիւկանները:
Ոյժը միութեան և համախմբվելու մէջ է և ոչ
զատված առանձնութեան: Ներկայ, դառն փոր-
ձերից յետոյ էր, որ պրոլետարիատները եկան այդ
հին ճշմարտութեան: Բանուր այլ ևս առաջվանը
չէ: Ճիշդ է, նրան դեռ ևս անմատչելի են հա-
մալարան, կուլտէ և այլն, բայց նա ստանում է
սկզբնական կրթութիւն, ապա ազատ մամուլ,
ազատ դրականութիւն, ազատ խօսք, միտնդ-
ներ, դասակարգութիւն, ձրի գրադարաններ-
ցարան,—ահա այս ամենը նպատակ է նպատ-
տում է պրոլետարիատի մտաւոր և բարոյական
զարգացման: Յիշեալ սխիւկան և կոթորցացիւ-
ններ, որ սկզբում զուտ համար ապական ընա-

սիրութիւն մընեղ վերջ, կը ջանար, իր եռան-
դուն ոգով ու ազդեցիկ ոճով—մը՝ որ մեր
տառապած սիրտերուն հետ կը խօսէր,—ծանո-
թացնել, հասկնել ֆրանսիացիներուն՝ թէ հայ
ազգը, թէ՛ իր խոտ փորքաթիւ, թէ՛ կարգացու-
մի ամենէն տարրական միջոցներէն իսկ զուրկ,
թէ՛ հաղածված, ճնշված, հարստահարված ու
ճգնված, այն, այդ անտանելի տառապանքնե-
րուն տակ հեծող ափ մը ժողովուրդը մեծ ոգի
մը կը լինէ իր մէջ՝ զարգանալու, ընդունակու-
թիւն՝ առաջադիմելու և նոյն իսկ... հանձարներ
ստեղծելու: Եւ իրեն ապացոյց՝ յիշեց մեր ան-
մահ դերասանը, Արամեան, որուն վրա հիա-
ցումով միայն խօսած են ժամանակակից մա-
մուլն ու իրեն երկու խաղացի մեծ արուեստա-
տիւրը վիճակին վրա՝ աւելցուց թէ «թէ և այ-
սօր—պարագաներու բերմունքով—որպէսեւ Ա-
դամանի պակասը լրացնողներ չը կան», սա-
կայն կը կարծէր տեսնել դեռավոր դերասա-
նին՝ պ. Գալֆայանի մէջ ապագայ ուշագ-
րութեան արժանի դերասանի մը բո-
լոր յատկութիւնները:

Գիշ յետոյ նորէն կը բացվէր վարագոյրը, և
թատերաբեմի տխուր ամպաւորեան ու մերկու-
թեան մէջ՝ կարճամտաւ բարձրանալով, նի-
հար ու խոտաղէմ երկուստարդ մը, գերեզմա-
նի մը պէս տխուր ու մահվան պէս գունատ,
երկար սև մազերը դէմքին վրա կախված ցան
ու ցիւր և ձախ ձեռքը թրի երակապակին վրա:
Կը ճանաչեք զինքը—Գալֆայանին է՝ Համլէտի
ստուերը հագած: Ծագուորութիւնը շատ լաւ է:
Հանդիսականները՝ բոլորովն լուս. ուղարու-
թեանը մտիկ կընեն: Բայց կամայ կամայ այդ
տպաւորութիւնը կը սկսի ջնջվել, մանաւանդ
իր մօր հետ ունեցած խօսակցութեան մի-
ջոցին, որովհետեւ երկուստարդ Համլէտի շար-
ժումները, դէմքի արտայայտութիւնն ու աչ-
քի դարձուածքները՝ թէպէտ չափէն աւելի
արտայայտիչ՝ շատ միօրինակ են: Ու ձա-
յը—մանաւանդ ձայնը—հակառակ իրեն մեղմ,
գրեթէ անլսելի արտասանութեան—խուլ ու չը
մշակված հնչուիներ միայն կը հանէր: Ամբող-
ջութիւնը բաւական աղող էր, ու քանի մը կը-
տոր՝ (ինչպէս օրինակ՝ Պլոյնիւսը սպանեցէն
վերջ երբ Համլէտ՝ ցնորած՝ յանկարծ իր հօր
ուրուստանը կը տեսնէ ու կը ծնորդէ...) շատ
աղող էր, մանաւանդ նկատել ունենալով նորա-
վար դերասանի ներկայ դրութիւնը: Հանդիսա-
կանները չը զլացան աշխոյթ ծափահարութիւն-
ներով քաղաքիչ ու միանգամայն վարձատրել
երկուստարդ Գալֆայանին որ, եթէ ըլլէ մը աւելի
լինաւ տանի իր այդ պակասութիւնները—ո-
րոնք անուղղելի չեն—չսկսելու, անշուշտ աւելի
մեծ աղողութիւն պիտի գտնէ ապագային:

Յերեկվի երկրորդ մասը շատ վատ տպաւո-
րութիւն թողեց, որովհետեւ հրաւիրված վեց
արուեստագետներէն ներկայ էր միայն միւն պ.
Գոմոտ (Gomot), որ աղող կերպով արտասանեց
երկու ոտանաւոր, Փրանսերէն լեզուով:

Յովհ. Գաւաթ

Եւրոպիայի ունէին, կարճ ժամանակի ընթացքում
բաղմանում, սփռվում են ամենուրեք. կամաց-
կամաց նրանք սկսում են մասնակցել քաղաքա-
կան և հասարակական գործերին: Եւ այսօր
պրոլետարիատը ներկայացնում է մի հզօր կու-
սակցութիւն՝ իր որդի կազմակերպութեամբ, որը
ծրագրով և որոշ նպատակ-պահանջներով:

Ներքին և արտաքին պատգամաւոր-
ներ... պարլամենտներում. այդ արդէն մի ամ-
բողջ յեղափոխութիւն էր. բանաւոր և պարա-
մենտ... Վերջին քան տարրայ ընթացքում այդ
կուսակցութիւնը մի այնպիսի առաջադիմու-
թիւն է արել, որի նմանը չէ ունեցել ոչ մի
պարլամենտական մարմին: Գերմանիայում, չնա-
յած երկաթէ կանցլէրի երկաթի թէժմին, նրա
անունը մի արտաքայ կարգի երեւոյթ է ներկա-
յացնում: 1870-կան թվականների սկզբում
ընթացածում նա ունէր միայն երկու պատգա-
մաւոր, որոնք ստացել էին 124,000 ըուէ. 1884-
ին նրա պատգամաւորների թիւը հասնում է
1890-ին՝ 35 պատգամաւոր 1,437,000 ըուէով:
1893-ի ընտրութիւններին ամբողջ Գերմանիա-
յի ընտրողների 7,674,000 ընդհանուր թիւից
1,786,000-ը բանաւորական էր. ներկայ տարկա-
յութիւնը նրանց թիւը հասաւ երկու ու կէս
միլիոնի: Փրանսիայում՝ 1889-ի պարլամեն-
տական ընտրութիւններին բանաւորական կուսակ-
ցութիւնը իր ծրագրի շուրջը ժողովել էր 400,000
ձայն, 1893-ին 700,000, իսկ անցեալ մայիսին
տեղի ունեցած ընտրութիւններին մի միլիոն
ից աւել: 2-րդ նայած, որ Փրանսիական պրոլետա-

ՆԱՄԱԿ ԹԻԻԻԻՍԻՑ

Ա գ Ր ի ա ն օ պ օ լ ի ս, յունիսի 10-ին

«Իմիրեան գրական մրցանակը» բաշխվեցաւ:
Ներկայացված էին հետեւեալ գործերը. «Բեռնա-
դիր» արձանագրութիւններ Ռուսիայ հայաբնակ
գաւառներու մէջ, Նիկոլայի, թարգմանութիւն
Խ. Յովհաննէսեանի.—«Արարողա», տեղագրա-
կան, պատմական հետազոտութիւն Գուրգա-
ւուի.—«Միջաշէլ» Նախադեանցի կենսագրու-
թիւնը, Ն. Գալֆայանցի.—«Բաշխատուր Արու-
սիանցի կենսագրութիւնը», Ներսէս Տէր-Վարա-
պետեանցի.—«Սոկրատ Սբրաւորիսի կեղեկե-
այ պատմութիւնը», հրատարակված ծանօթու-
թեամբ, Մետոյ վարդապետ Տէր-Մովսէսեանցի,
հինգն էլ տպված. և երկու ձեռագիր, երկուքն
էլ Արմաշի վարդապետներից, Օրմանեանի սա-
ներից, «Նիշէի մատենագրութեան ուսումնասի-
րութիւնը», Բաբգէն վարդապետի և «Շարեկա-
ցիի ուսումնասիրութիւնը», Մուշեղ վարդապետի:
Այդ վերջին երկուքը կը պատկանէ «Մասիս»
մէջ Տիգրան Արփիար պաշտպանում է այդ որո-
շումը:

Թուրքիայի Մեծ Արմատան գիւղի միւ-
ղիւր է Հայի Գէորգ Պոյաշեան անուն մը
հայ, որը իր անգլիկաներով տաճիկնե-
րից ամենին յետ չի մնար: Վառնա եկած
նամակներից տեղեկանում ենք, որ այս վերջին
օրերս, իր մանաւոր հաղածման գոհ հայ մը,
Հայի Գէորգի վրա, ձորէ մը անցնելու առնա
հրացան կը տարէր, բայց իրորի Միւղիւրը,
ձիով է լինում, յայտնում է փախչել, և գիւղը
հասնելուն քսանի չափ երկուստարդներ բան-
տարկել է տալիս: Ժողովուրդը, յոյսը կոր-
ած, հեռացրում է կառավարութեան, որ էլ
չէ կարող դիմանալ միւղիւրին ապրիւնութեանց,
և խնդրում է հեռացնել: Այս դէպքից լուր չու-
նէ պատրիարքարանը:

Վերջին օրերս պատրիարքին հրաժարելու
դրոյցներ կային, պատճառն այն է, որ կառա-
վարութիւնը պահանջում է Սիսի կաթողիկոս
կամ Բարթողիմէոսին և կամ Ալեքսանդր ընտ-
րել: Պատրիարքը սպառնաց հրաժարել, սակայն
այժմ կը լուէ:

Կ. Պոլսի մէջ Գառնիկ Յալոյճեան անուն
մէկը սպանվում է մի քանի ամիս առաջ. ընտա-
նիքը անմիջապէս իմաց է տալիս ոստիկանու-
թեան. ինչ է անում ոստիկանութիւնը.—«Շուտ
անձնաւորական է եղել, գու՞ք՝ սպանվել է, կանեք,
կամ ետ առէք խօսքերնիդ, և կամ կը պատժ-
վեք» ասում են այրիին, որը հաղանդում է
և յայտարարում թէ սխալվել է, իր ամուսինը
չէ սպանվել, հապա անձնաւորական է եղել: Եթէ
այս բանը հիմա, Պոլս կարող է պատահել, ե-
րկակայեցէ ինչ կը լինի գաւառների մէջ:

Կ. Պոլսի մէջ խօսակցութեան նիւթ է դարձել
Իզմիրի մէջ տեղի ունեցած ցաւալի դէպք մը:
Ֆէրէն անուն բողոքական եպիսկոպոս մը ու-
նեցում է մի փղթիկ որբանոց, որի նպատակն
ընտանիքը ստանում է Ամերիկայից: Անպիտան կոծա-
ւորը իր դիւրեց օգտվել է, և որը ազդիկներից
մէկը բռնաբարել... նա յանձնված է այժմ ար-
դարութեան և իր արժանի պատիժը կը գտնի:

Բուրժուազիան շատ լաւ է ըմբռնում այս
փիլիսոփայի շարժումը: Արդէս ջրահեղ լինողը
ձեռք է մեկնում, ճիշդ է թափում բունը իւրա-
բանիւր մի ծղոտ, նոյնպէս և բուրժուազիան
զուրկը կրցնած բաղնում է բոլորի դռները,
յուսահատ՝ օգնութեան հրաւիրում: Եւ նրա
չնորհիւ ահա նորից գլուխ են բարձրացնում
վաղուց ի վեր ընած ստոր ինտիմիտ-կրքերը՝
անտիսեմիտիզմ, միլիտարիզմ և կապիտալիզմի
աջ ձեռքը՝ կղերականութիւնը: Ծարբեր-տարբեր
կուսակցութիւններ, որոնք ոչ միայն ոչ մի անու-
նութիւն, ոչ մի ընդհանուր կապ չունեն, այլ նոյն
իսկ միմեանց հակառակ և սխիւկան թշնամիներ
էին, այսօր նրանք գաղն են կնքել և թն թնի
տուած խաչակրաց մի նոր արշաւանք են սկսել
ազգայնականութեան թէ՛ և մեծագոյն, բայց ճշգլած
զատակարարի դէմ, որը ինչ է պահանջում, ինչ է
աղբիւրում՝ հաւասար արդարութիւն անխտիր
բոլորի համար: La vérité est en marche,
et rien ne l'arrêtera, ասում է Զօյա: Եւ ար-
դարութիւնը վերջ ի վերջոյ յաղթող պիտի հա-
ղիսանայ:

Ալեք

Եւ Կ. Պօլսի հայոց վարձկան «Բուզանդիան»
թերթը առիթն ունի իր քաղ. հայտերն արտա-
պահելու միջոցով Եւրոպայի քաղաքները հայ-
երէն լինելու մասին իր արդարեւ ճշմարիտ
հայտերը հայտնի դնելու համար։ Այս մարտի
համարը, որոնք չորս տարիներէ ի վեր հա-
զարաւոր հայ որբեր և շատ էլ ամբողջ հայ ըն-
տաններէն ապրեցնում են, որոնք միլիոններ հա-
ւաքեցին քաղաք հայեր կերակրելու համար,
այժմ մէկ դէպք մը ընդհանրացնելով հայոցմը
կը տեղան... Ապրիլի 1-ին յայտնի կը լի-
նի։ Եւ աւելի ցաւալին այն է, որ այդ յարձա-
կումներուն ոյժ կը տայ մեր պատրիարքարանը,
որը որբերու փողերով իր պաշտօնեաներուն ու-
ճիկ կը տար...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսից գրում են, որ սուլթանը կարեւոր
ճրագիրներ է մշակում Արաբիայի համար, որ-
ոնց նպատակն է միանգամայն խաղաղացնել
այդ երկրները։ Նա մտադիր է ազատել կարկնե-
րին և միւս աստանդական ցեղերին որ և է
հարկից և որովհետեւ Արաբիան 12 միլիոն ազ-
գաւորներով ունի և կարող է 600 հազար
զօրք տալ, ուստի սուլթանը որոշել է նրանցից
մի քանի դորադներ կազմել համիդիէ ընդ-
հեծելագործի նման։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԻՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԷ

ԿԱՊ-ՀԱՅՏԻ, 4 յուլիսի։ Սանտ-Նազարի անձնա-
տուր լինելը ստորագրված է։ Միացեալ-Նահանգ-
ները ընդունեցին Պանդօի պայմանները, սպա-
նիացիները յետ կը քաշվին զինուորական պատու-
ներով և անպաշտ կողմից Սպանիա։

ՍԱՆՏ-ԵԱՊՈ, 4 յուլիսի։ Այստեղի ամերիկական
նաւատորմին հրաման է տրված ուղարկել պա-
տերազմական բոլոր ծանր նաւերը։ Ուստիսի
նաւատորմին հետ միացնելու համար։

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 4 յուլիսի։ Կառավարչական
բարձր պաշտօնեաները հաւատացնում են, որ
Մակ-Կինլէյ չէ կամենում Ֆիլիպինեան կղզիները
լքել Սպանիայից, այլ բաւականաճախ է Մարիա-
նեան կղզիներէ մէկով—Գուամով և ածուխի
կայարանով, եթէ միայն Սպանիան անկախ կը
յայտարարի Կուբան և կը հեռացնի իր զօրքերը
Պորտո-Րիկոյից։ Մակ-Կինլէյ մտադրութիւն չու-
նի պատերազմական որ և է վարձատրութիւն
պահանջել, եթէպէտեւ որ և Սպանիան աւելի
շուտ պատերազմ կը շարունակի, քան թէ կը
ծանրաբեռնի իրան նոր պարտաւորութիւններով։

ՄԱԴՐԻԴ, 4 յուլիսի։ Ձինուորական միլիտորը
յայտնեց, թէ խաղաղութիւնը հնարաւոր է
այն պայմանով, որպէս զի կուբացիներին
թող տրվի վճուել ընդհանուր ձայնատու-
թեամբ, թէ արդեօք կամենում են իրանք
անկախութիւն կամ ինքնավարութիւն Սպանիայի
զերիսխանութեան տակ։ Միլիտորը Պորտո-Րիկոյի
զինանկաւ գէտ է։ Ինչ վերաբերում է Ֆիլիպի-
նեան կղզիներին, կառավարութիւնը մի նախա-
ղիծ ունի, որը ոչ միայն կապանով Սպանիայի
տիրապետութիւնը այդ կղզիների վրա, այլ և կը
վերականգնի ընտանի հանգստութիւնը։

ՄԱԴՐԻԴ, 5 յուլիսի։ Սպառնալից յայտնեց, որ
ոչ կառավարութիւնը, ոչ Բալակո չեն մասնակե-
ցել Սանտ-Նազարի անձնատուր լինելու բանակ-
ցութիւններին, որը ճուրայ իրաւունք ունի
վճուել իր կատարեալ պատասխանատուութեամբ։
ՎԱՇԻՆԳՏՈՆ, 5 յուլիսի։ Ձինուորական մի-
լիտորը վերջին հրատարակեց Նախագահի հեռա-
գիրը, թէ սպանիացիները անձնատուր եղան
Սանտ-Նազարի առաջ։ Մանրամասնութիւնները կը
լինեն։

ՄԱԴՐԻԴ, 5 յուլիսի։ Կամբոնի միջնորդու-
թեամբ, կառավարութիւնը կը սկսի բանակցու-
թիւններ Միացեալ-Նահանգների հետ՝ խաղա-
ղութեան մասին։ Սպանիան համաձայնում է,
որպէս զի Կուբան ընդհանուր ձայնատուութեամբ
վճուէ, թէ արդիւնի բէժիմ է ինչն ցանկանում։

ՆԻՒԵՐՈՎ, 5 յուլիսի։ Սանդուխի նաւատորմը
մտաւ Սանտ-Նազարի նաւահանգիստը։

ՍԱՆՏ-ԵԱՊՈ, 6 յուլիսի։ Բերդապահ զօրքը,
ճուրայի առաջնորդութեամբ, զուրս եկաւ ամբու-
թիւններից, մոտեցաւ ամբերիական գծերին և
վայր դրեց զինքը, դուռը գնդի ետեւից։ Սպա-
նիական զրօշակը հանեցին և նրա տեղ բարձ-
րացրին ամբերիականը։

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 6 յուլիսի։ Ձինուորական խոր-
հրդի մէջ ընկեց զբոսիչը։ Ընդհանուր կար-
ծիքն այն է, որ այժմ պէտք է յարձակվել Պոր-
տո-Րիկոյ վրա և ուղարկել Վատսոնի նաւա-
տորմը դէպի սպանիական ափերը։

ՄԱԴՐԻԴ, 6 յուլիսի։ Տանիքից հեռագրում են,
որ Վատսոնի նաւատորմը սպառնում է երեք-
շաբթի օր։

ԼՕՆԻՊՈՆ, 4 յուլիսի։ Համայնքների ժողովը
Կէրզոն յայտնում է, թէ Անգլիան, Ֆրանսիան,
Իտալիան և Ռուսաստանը զորքում էին համա-
ձայն, երբ առաջարկութիւն արին Բ. Դրան
Կրետէի ժամանակաւոր վարչութեան վերաբեր-
մամբ և այդ բանի մասին հաղորդագրեցին Վեր-
մանիային և Աւստրո-Ունգարիային, որոնք թէ-
պէտ և հեռացրին զօրքերը Կրետէից, բայց չը
զուրս եկան եւրոպական կօնցէրտից։ Բ. Դուրը
բողոքեց ժամանակաւոր վարչութեան նախագծի
դէմ, բայց Կէրզոն չէ կարծում, որ դա պահան-
ջէր որ և է զորքողութիւն։ Վարչութեան նա-
խագիծը արդէն սկսում է գործադրվել։

ՀՕՆԿՕՆԳ, 4 յուլիսի։ Ձինացիների կրած
պարտութիւնը ապստամբների կողմից հաստատ-
վում է։ Վու-Չօմու գետից հանեցին և թաղե-
ցին հազար դիակներ։ Կանտոնում առում են,
որ ապստամբների գլխաւոր պարագլուխներից
մէկն է զօկուոր Սուր-Նատ-Տիլէն, որի կայանա-
ւորումը Լօնդօնի չինական դեսպանութեան մէջ
իր ժամանակ այնքան աղմուկ հանեց, Լուր է
պտտում, որ ապստամբները վճուել են յարձա-
կում չը գործել Կանտոնի վրա՝ միջազգային
բարդութիւններից խուսափելու համար։ Կանտո-
նում շատ համակրում են ապստամբներին։

Կ. ՊՈԼԻՍ, 4 յուլիսի։ Բ. Դուրը Կրետէի վե-
րաբերութեամբ իր ուղարկած չըջաբեռակաւոր
պատասխանն ստացաւ խաղաղական կառավա-
րութիւնից։ Իտալական կառավարութիւնը պըն-
դում է, որ կրետական հարցի լուծումը, ի հար-
կէ, պէտք է հիմնվի ինքնավարութեան վրա
սուլթանի ծայրագլուխ իշխանութեան ներքոյ,
բայց կղզին առանց կառավարութեան թողնել
անհնարին է։ Ի նկատի ունենալով այն հա-
րամաքը, որ անհնարին է նորից օսմանեան
վարչութիւն ժողովել և որովհետեւ Բ. Դրան և
պետութիւնների մէջ չը կարողացաւ համաձայնու-
թիւն կայանալ հարցի վերջնական լուծման մասին,
չորս պետութիւնները կարծում էին, որ այդ
ժամանակաւոր ըմբիւր ամենից յարմարն է։

ՕԻԷՍՍ, 5 յուլիսի։ Բօլզարական իշխանը իր
ամուսնու և որդու հետ կը ժամանի Օդէսա յու-
լիսի 6-ին և նոյն օրն և եթէ ճանապարհ կընկնի
Պետերբուրգ։

ՊՐԻՆԻՊ, 5 յուլիսի։ Միլիտորների խորհրդում
Դէլիասէ հաղորդեց իր ընկերներին թէ ծովա-
պետները ջանքեր են գործ դնում ժամանակա-
ւոր վարչութիւն կազմակերպելու համար Կրե-
տէում։

ՀՕՆԿՕՆԳ, 5 յուլիսի։ Կանտոնից հեռագիրը հա-
ղորդում է, որ նոր-չինական կուսակցութեան աչքի
ընկնող անձինք հաւաքվեցին այնտեղ ապստամ-
բութիւնը պաշտպանելու համար Լուրերին նայե-
լով, նոր կառավարութիւնը կը կազմակերպվի,
որը բաղկացած կը լինի եւրոպական զաւարիար-
ներով տղաբոլմած չինացիներից, որի համար ե-
րաշխաւորված է Անգլիայի և Նապոնիայի օգ-
նութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 5 յուլիսի։ «Վարմիր Խաչի»
գլխաւոր վարչութեան դրամարկը ստացաւ
Պաշտօնը Կայսրի նուիրած 500,000 ռուբլին՝
օգնութիւն հասցնելու 1896 թ.ին անբերրու-
թիւնից ներկած գիւղացիներին մի քանի տե-
ղերում։

Ներքին գործերի միլիտորը, ուղարկութեան
առնելով այն խախտումն, որ թող է տրված
«Քյոն» լրագրի № 5-ում, տպելով կամ Լէվ
Տօլստոյի «Սով է թէ սով չէ» վերնագրով յօդ-
ւածը, որոնց յայտնել առաջին նախազգուշու-
թիւն յանձնի հրատարակել Գալլէբուրովի և իւր-
բաղիւր Գօլովինսկու։

Նշանակվում է գեներալ-մայոր Զայիովիկի
Ֆէրզանեան չըջանի զինուորական նահանգապետ
և զօրքերի հրամանատար։

Ծառայութիւնից արձակվում է Ֆէրզանեան
չըջանի զինուորական նահանգապետ և զօրքերի
հրամանատար գեներալ-լէյտենանտ Պօլաւո-Շվէյ-
կովսկի՝ համազգեստով և թոշակով։

Անդրժանի զինուորական դատարանը Ֆէրզա-
նեան չըջանում տեղի ունեցած ապստամբու-
թեան գործը քննելով յունիսի 28-ին կայացրեց
վճիւր երկրորդ խմբի 48 մեղադրեալների վերա-
բերմամբ։ Այդ մեղադրեալներից երկուսը արդար
են ճանաչված, մէկ պատանի բանտարկութեան
է դատապարտված, մնացած 45 հոգին, որոնք
մեղադրվում են վերջինեալ ապստամբութեանը
մասնակցելու համար, մահվան պատժի են դա-
տապարտված, մի և նոյն ժամանակ դատարանը
վճուեց միջնորդել 32 անձանց մահվան պատժը

փոխարինել տաժանակիր աշխատանքներով 20
տարով, իսկ երկու կառնաւորվածներին երկու
տարովայ բանտարկութեամբ։ Իսկ մնացած 11
մեղադրեալների համար դատարանը հնարաւոր
չը համարեց միջնորդել։ Պաշտօնը Կայսրը բա-
րեհանեց թիթեացիներ 34 դատապարտվածների
վրձակը և հրամայեց մահվան պատժի տեղ տա-
ժանակիր աշխատանքներին ենթարկել նրանց
և բանտարկել։

ՏԱՇԿԷՆՏ, 6 յուլիսի։ Նոստրոն միջոցներ
են ձեռք առնվում Անդրժանի գործը շուտ վեր-
ջացնելու համար։ Ինչ հոգի կախաղան բարձ-
րացրեցին։ Երկրի մէջ հանգստութիւն է։

ՇԱՆԿԱՅ, 6 յուլիսի։ Նորից ապստամբու-
թիւն եղաւ։ Ֆրանսիացիները սպանեցին 15
ապստամբներին, այժմ խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵՅ ԱՐԾԻՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՎԱՐԺՈՒՂԻ

ՈՐ ԳԻՏԷ ՖԲԱՆՍԵՐԷՆ ԵՒ ՄՈՒՋԻԿԱ, կամե-
նում է վարել կոմպանիոնուհու և կամ դաս-
տիարակչուհու (գովերնանտկա) պաշտօն, մի կամ
երկու աղջկայ մօտ։ Համաձայն է հեռանալ քա-
ղաքից։ Հասցէն՝ Լաբորատորնայ, № 5, Դ. Բուր-
նա, спросить учительницу. 5—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

Երանով յայտարարում է, որ նրա ներկայութեամբ, յուլիսի 15-ին, ցերեկվայ 1 ժա-
մին, տեղի կունենայ ԱճՈՒՐԻ, ՁԻՐ տալու Թիֆլիսի ձիաբաշի 50 փազօնների համար։
Ցանկացողները կարող են ծանօթանալ պայմաններին հետ ուղարկվող շինարարական
բաժնում։ 1—3

ՀՈԳԵԿԱՆ-ՀԻՄԵՆՈՒՆԵՐԻ համար քաղաքի միջոցներով բացվող ԱՊԱՍՏԱՐԱՆԻ շի-
նութեան համար ՊԱՆՏԱՋՎՈՒՄ է ՏՈՒՆ առանձնակի, մեծ բազով և եթէ կարելի է
այդիով քաղաքի ծայրերից մէկում։ Սենեակների թիւը պէտք է լինի ոչ պակաս
12—15-ից։ Ցայտարարութիւններով դիմել քաղաքային վարչութեան։ 1—3

ՁԵԹԻ ԵՒ ՍԱՊՈՆԻ ԳՈՐԾԱՐԱՆ
Յ. ԹԱՅԻՐՈՎԻ և Կ. ԱԼԻՍԱՆՈՎԻ

Վ. Ա. Ճ. Ա. Ո. Վ. Ո. Մ. Ե

2 ՈՒՒ ՍԱՊՈՆ

Հինգ զանազան մեծութեան, №№ 8, 13, 15, 18 և 24.

Դիմել «ԿԱՎԿԱՍՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» ԴԵԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՅԱՄԱՆՆԵՐ
(„Кавказское Товарищество Торговли Аптекаремми То-
варами“) և բոլոր բախվել մագաղաններում։ Մեծ աքանակ գնումն նոյն իսկ գործա-
րանի մէջ։—Նրանեան շօսել, սեփական տուն։ (Կ. Ն.) 1—12

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖԲԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱՍԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,
եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, ժամելով Տրապիզոն, Սամսուն և Պօլսի։ Մեկնում է Բաթում
միջ. չորեքշաբթի, 8/20 յուլիսի ԱՆԵՍՈԼԻ չորեքշաբթի, նաւապետ ԲԻՆԿԻԻ։ Եւ այսպէս շա-
րունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսները տրվում են սովորականից
պակաս գինով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար
թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին։

ԲԱՌՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԴՄԻՏԻՆ, Նաբէլէմայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բաբեկնդա-
նեանին, Սիօնի փող. Նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիւրաբեանին, Կոյի. բեա-
կինմայա հրապարակ։ ՆՈՎՈՐՈՍԻՑԿԱ—պ. Մելիսիօր Հեքշերօղեկին։ (Կ. Տ. Տ.) 9—20

Նոր առացվել են արտասահմանից
ԿԱՆԱԶԱՅԻՑՆ ԵՒ ԽՕՍՈՒՆ ԹՈՒԹԵԿՆԵՐ

և զանազան օտարերկրեայ թըռ-
չուններ։ Նոյն տեղում ցան-
կանում եմ գնել Կովկասեան
կենդանի վայրենի անասուններ,
օրինակ եղջերու, պալարի, ջէյ-
րաններ, վայրի խոզեր և այ-



Տեր և զանազան տեսակ թըռ-
չուններ։
Պէտք է դիմել հետեւեալ հասցեով.
Միլայէեան փողոց № 106, Բարա-
մովի տուն։
Գուգօ Վինկեր
(Կ. Ե. Տ.) 7—12

ԱՌԵԻՏՐԵԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նաղօրնայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած
աշակերտներ և աշակերտահաններ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանի-
ցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնա-
րանական չըջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատտեստատներ։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԵՐԻ 1-ԻՑ։

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս և եղբ. Մովսիսեանի բան-
կային դրամներով և կուրսեր հիմնողի դատարանում։ Օտարաբարակացողները դիմում են՝
ТНФЛИСЬ, учредителю коммерческих курсовъ С. П. Мануэляну. (Կ.) 5—12